

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 318-Ն որոշմամբ

**ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՆՈՒԻՏԵՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՆԵՐԱՌՎՈՂ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

- Ապահովագրական ընկերության կողմից առաջարկվող պարտադիր կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանագիրն առնվազն պետք է ներառի հետևյալ պայմանները.
- *«կուտակային կենսաթոշակային անուիտետ» անվանումը, ընդ որում, անուիտետի ցանկացած պայմանագիր, որը ներառում է «կենսաթոշակային անուիտետ» բառակապակցությունը, դրա հղովված ձևերը, օտար լեզվով այդ բառերի հայերեն տրանսլիտերացիաները, թարգմանությունները կամ դրանց զուգորդությունները պետք է բավարարեն սույն որոշմամբ սահմանված կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանագրին ներկայացվող պահանջներին*
- ապահովադիր հասկացությունը՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
- ապահովագրված անձ՝ ֆիզիկական անձ (անձինք), ում ապահովագրական ընկերությունը վճարում է անուիտետ,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 998 հոդվածով նախատեսված պայմանները՝ ըստ կիրառելիության,
- ամուսինների անուիտետի դեպքում՝ ամուսնության վկայականի սերիան և համարը
- ապահովադրի ժառանգների անձնական տվյալները,
- անուիտետի վճարների չափը, ժամկետը, հաշվարկման մեթոդը,
- պայման այն մասին, որ անուիտետի վճարումները կատարվում են

ամսական պարբերականությամբ,

- պայման այն մասին, որ անուիտետի վճարումները սկսվում են պայմանագրի կնքման օրվան հաջորդող ամսվա 1-ից,
- պայման այն մասին, որ ամսական պարբերականությամբ վճարվող անուիտետի մեծությունը չպետք է պակաս լինի վճարման օրվան նախորդող 12 ամսյա կտրվածքով նվազագույն պարենային զամբյուղի միջին մեծությունից,
- պայման այն մասին, որ պայմանագրի պայմանների փոփոխությունները կարող են կատարվել միայն ապագա ժամանակահատվածի համար, կողմերի համաձայնությամբ պայմանով, որ դրանք չեն կարող վատթարացնել կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանները,
- անուիտետի հաշվին հաշվեգրվող տոկոսադրույքի մեծությունը,
- անուիտետի պայմանագրի երաշխավորված ժամկետը,
- անուիտետի պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների չափերը և կիրառման դեպքերը, կարգն ու պայմանները,
- պայման այն մասին, որ անուիտետի պայմանագրից բխող պարտավորությունները չեն կարող գրավադրվել որպես մեկ այլ պարտավորության կատարման ապահովման միջոց,
- անուիտետի ժառանգման կարգը և պայմանները,
- ապահովագրական (կենսաթոշակային) գաղտնիքը տրամադրելու կարգը և պայմանները,
- պատասխանատվությունն անուիտետի պայմանագրի պայմանները խախտելու դեպքում,
- պայմանագրի կողմերի միջև վեճերի լուծման կարգը:

(1-ին կետը փոխ. 15.07.14թ. թիվ 168Ն)

- Ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող կամավոր կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանագիրը պետք է ներառի սույն կարգի 1-ին կետով սահմանված պայմանները, բացառությամբ 8-րդ և 9-րդ, 10-րդ կետերի, ինչպես նաև
- ապահովագրական ընկերությանը փոխանցված միանվագ գումարի կամ պարբերական վճարների մեծությունը,

- մինչև առաջին վճարումն անուիտետի՝ անուիտետի հաշվի վաղաժամկետ մասնակի նվազեցման հնարավորությունը և պայմանները,
- ապահովագրավճարի վճարման պայմանները պարբերական վճարման դեպքում
- անուիտետի վճարման ձևը (միանվագ վճարի կամ տարաժամկետ վճարների տեսքով) կամ վճարման ձևը և կարգը,
- պայման այն մասին, որ մասնակիցը կարող է ստանալ անուիտետը, ինչպես նաև դրա վրա հաշվեգրված տոկոսները միայն «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կամ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված այլ դեպքերում,
- Օրենքով սահմանված հիմքերով մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը անուիտետի գումարը ստանալու պայմանները, ժամկետները և կարգը,
- ապահովադրի անուիտետի պայմանագրով ապահովագրողի պարտավորություններն իր կողմից ընտրված ապահովագրական ընկերությանը փոխանցելու իրավունքը և պայմանները,
- մահվան վճարի մեծությունը, հաշվարկման կարգը: